ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ

ԱՄՈՓՈՓԱԳԻՐ

Վերապատրաստում հիմնախնդրի հատկորոշման մեթոդների և մեթոդների կիրառման վերաբերյալ

Ներածություն. ի՞նչ է խնդիրը, հիմնախնդիրը, ինչու՞ է անհրաժեշտ հիմնախնդիրների հատկորոշումը (ուսուցողական նյութ):

Սեսիա 1. Շահակիր կողմերի քարտեզագրում/վերլուծություն. Մինչև ծրագրի/գործունեության մեկնարկը հաստատությունների, խմբերի և անհատների բացահայտման և դրանք դասակարգման գործընթացն է՝ ըստ խնդրի լուծմանը ուղղությամբ նրանց մասնակցության մակարդակի, հետաքրքրության և ազդեցության:

Սեսիա 2. Հիմնախնդիրների հատկորոշում. Խնդիրների հատկորոշման մի քանի մեթոդներ.

- Հարցում. նպատակն դեմ առ դեմ, հեռախոսով կամ առցանց պարզել համայնքի կամ տվյալ ոլորտի 3 ամենակարևոր խնդիրները՝ ըստ հարցման մասնակիցների:
- «Մտագրոհ». նման է վերոնշյալ հարցման մեթոդին, բայց ավելի ինտերակտիվ է:
- Café dialogue/«Սրճարանային քննարկում». ինտերակտիվ մեթոդ է, որը թույլ է տալիս միաժամանակ բացահայտել մի շարք ոլորտներում առկա խնդիրները:
- Գրասենյակային/փաստաթղթային հետազոտություն. լրացում է վերոհիշյալ բոլոր մեթոդների համար փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում:

Սեսիա 3. Հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշում

Խնդիրների առաջնահերթությունների որոշման դասընթաց՝ տեսություն և գործնական վարժություն: Առաջնահերթությունների որոշման համար կներկայացվի կշիռա-միավորային մեթոդ և ըստ հավաքած բալերի կորոշվեն առաջնահերթ հիմնախնդիրները: Կտրամադրվեն նաև ձևաթերթեր մեթոդների կիրառման համար:

Տնային աշխատանք. Սա գործնական վարժություն է, որը կհաջորդի վերոնշյալ սեսիաների տեսական մասերին: Մասնակիցները կփորձարկեն առաջարկվող մեթոդները և կենրկայացնեն հաջորդ դասընթացի ընթացքում:

Մասնակիցներ. կոնսորցիումների 20 անդամներ:

Տևողությունը ՝ 3 ժամ (յուրաքանչյուր սեսիա)։

1. Հիմնախնդիրների հատկորոշում

Կան հիմնախնդիրների հատկորոշման բազմաթիվ մեթոդներ։ Ստորև առաջարկվում է մի քանի մեթոդ.

Հարցում. Սա շահույթ չհետապնդող կազմակերպությունների փոքր (հետազոտական կենտրոններ, ՔՀԿ-ներ և այլն) հարցում է։ Այն կարելի է իրականացնել դեմ առ դեմ, հեռախոսով, էկտրոնային փոստի միջոցով կամ առցանց որևէ գործիքով։ Հարցման նպատակն է պարզել համայնքի կամ տվյալ ոլորտի առնվազն 3 ամենակարևոր հիմնախնդիրը՝ ըստ հարցման մասնակիցների։ 3-ը առաջարկվող նվազագույն թիվն է։ Ըստ մասնագիտական փորձի՝ այս մեթոդն ունի որոշ հոգեբանական նշանակություն և թույլ է տալիս հնարավորնիս իրատեսորեն վեր հանել հիմնախնդիրները. շահակիրները սովորաբար հակված են որպես ամենակարևոր հիմնախնդիր առաջարկել այն հիմնախնդիրը, որում իրենց համայնքը, շահի խումբը, գուցե անձամբ իրենք շահագրգռված են։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ որպես երկրորդ, երրորդ առաջնահերթություն շահակիրները առաջարկում եմ համայնքի կամ ոլորտի համար ընդհանուր և իրատեսորեն առավել կարևոր հիմնախնդիր։ Հիմնադխնդիրը կարող է մեծ լինել, և հարցման մասնակիցներին հնարավոր է խնդրել, ներկայացվի նաև ենթախնդիրներ։ Հարման արդյունքում նշված հիմնախնդիրները/ենթախնդիրները համադրվում են։ Ամենաշատ նշվածներից ձևավորվում է հիմնախնդիրներց ցանկը (ուսուցողական նյութեր. ընտրանքի ցուցումներ, հարցաթերթ, ամփոփագիր)։

«Մտագրոհ». Նման է վերոնշյալ հարցման մեթոդին։ Առավելությունն այն է, որ այս մեթոդը ինտերակտիվ է։ Կարող է իրականացվել սենյակում կամ առցանց, երբ կրկին առաջարկվում է ներկայացնել համայնքի կամ տվյալ ոլորտի առվազն 3 ամենակարևոր հիմնախնդիր և այդպիսով, ստանալ հիմնախնդիրների ցանկ։

Café dialogue /«Սրճարանային քննարկում». Սա մի ինտերակտիվ մեթոդ է, որը թույլ է տալիս միաժամանակ բացահայտել մի շարք ոլորտներում առկա հիմնախնդիրները։ Օրինակ, եթե քննարկվում է 4 ոլորտ, յուրաքանչյուր ոլորտի հիմնախնդիրները քննարկվում են առանձին սեղանի շուրջ։ Հերթագայման/ռոտացիայի սկզբունքով բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն քննարկել և բացահայտել յուրաքանչյուր ոլորտի հիմնախնդիրները։ Վերհանված բոլոր հիմնախնդիրների համադրմամբ ձևավորվում է հիմնախնդիրների ցանկը՝ ըստ ոլորտների։ Բացի մասնակիցներից, այս մեթոդի կիրառման համար անհրաժեշտ են ֆասիլիտատորներ և օգնականներ, ովքեր կվարեն քննարկումները, գրառումներ կանեն և կամփոփեն։ Այս մեթորդը արդյունավետ է դեմ առ դեմ հանդիպման դեպքում։

Գրասենյակային/փաստաթղթային հետազոտություն. Այս մեթոդը լրացում է վերոհիշյալ բոլոր մեթոդների համար. Հիմնախնդիրները բացահայտվում են կառավարության ռազմավարական փաստաթղթերի, փորձագետների և հետազոտողների նյութերի ուսումնասիրության արդյունքում։ Մեթոդը կարելի է կիրառել և՛ առցանց, և՛ դեմ առ դեմ տարբերակներով։

Ծանոթագրություն. Բոլոր շահակիր կողմերը, ոչ միայն քաղաքացիական խմբերի, այլև պետական մարմինների (օրենսդիր և գործադիր) ներկայացուցիչները պետք է ներգրավվեն այս

գործընթացում, որպեսզի նրանց միջև սահուն երկխոսություն ապահովվի հիմնախնդրի լուծման լուծման ուղղությամբ:

Տնային աշխատանք. Սա գործնական վարժություն է, որը կհաջորդի տեսական մասին: Նախընտրելի է, որ այն տեղի ունենա ոչ թե նույն օրը, այլ տնային աշխատանքի ձևով, երբ մի քանի օրվա ընթացքում մասնակիցները կընտրեն առաջարկվող վերոնշյալ մեթոդներից մեկը և կանցկացնեն հիմնախնդրի հատկորոշման խաղարկային վարժություն՝ իրենց կազմակերպության անդամների, գործընկերների, ուսանողների, կամավորներ և այլն մասնակցությամբ (իրական կյանքում նրանք պետք է հատկորոշեն իրենց շահակիր կողմերին, օրինակ՝ բնակիչներին, պետական կառույցներին, ՔՀԿ-ներին, մասնավոր հատվածին, փորձագետներին և այլն) և հարցերն ուղղեն նրանց: Այս վարժության արդյունքում մասնակիցները կհանգեն հիմնախնդիրների մի ցանկի, որը կօգտագործեն հիմնախնդիրների առաջնահերթության որոշման վերաբերյալ հաջորդ դասընթացի ընթացքում:

2. Շահակիր կողմերի քարտեզագրում/վերլուծություն

Ովքե՞ր են շահակիր կողմերը

Շահակիր կողմը, ցանկացած անհատն է, սոցիալական խումբը կամ դերակատարը, որն ունի շահ, իրավական, բարոյական պարտավորություն կամ որևէ այլ մտահոգություն, շահագրգիռ է որևէ հանրույթի կամ կառույցի խնդիրների բացահայտման, որոշումների կայացման և իրականացման վերաբերյալ: Շահակիր կողմերը կամ ազդում են նպատակների իրականացման վրա, կամ կրում են իրականացման ազդեցությունը:

Ի՞նչ է շահակիր կողմերի վերլուծությունը

Շահակիր կողմերի վերլուծությունը մինչև ծրագրի/գործունեության մեկնարկը հաստատությունների, խմբերի և անհատների բացահայտման և դրանք դասակարգման գործընթացն է՝ ըստ խնդրի լուծմանը ուղղությամբ նրանց մասնակցության մակարդակի, հետաքրքրության և ազդեցության: Այս գործընթացը ներառում է նաև լավագույնս շահակիր յուրաքանչյուր կողմի ներգրավումը և հաղորդակցումը նրանց հետ հիմնախնդրի լուծման ողջ ընթացքում:

Ինչպե՞ս իրականացնել շահակիր կողմերի վերլուծություն

Որպես առաջին քայլ՝ պետք է քարտեզագրել հնարավոր բոլոր շահակիրներին: Դա կարելի է իրականացնել Շահակիրների աղյուսակի օգնությամբ.

- Քննարկման միջոցով պատրաստվում է հնարավոր բոլոր շահակիրների ցանկը
- Նկարագրվում է յուրաքանչյուր շահակիր կողմը, դրանց դերն ու գործառույթները
- Նշվում է հիմնախնդրի լուծման հետ կապված շահակիր յուրաքանչյուր կողմի հետաքրքրությունը և հիմնախնդրի լուծման վրա դրանց ազդեցությունը
- Նշվում է հետաքրքրության և ազդեցության մակարդակը, օրինակ, *մեծ, միջին, փոքր*՝ հիմնախնդրի լուծման մեկնարկին և ավարտին:

Շահակիրների աղյուսակ

Շահակիր կողմեր	*Նկարագրություն*	*Հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրությունը մեկնարկային փուլում*	*Հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրությունը ավարտական փուլում*	*Հիմնախնդրի վրա ունեցած ազդեցությունը մեկնարկային փուլում*	*Հիմնախնդրի վրա ունեցած ազդեցությունը ավարտական փուլում*
1.		Փոքր		Մեծ	
2.		Մեծ		Միջին	
3.		Մեծ		Միջին	

Այնուհետև պատրաստվում է կոորդինատային համակարգ, որի վրա տեղափոխվում են աղյուսակի արդյունքները.



Ազդեցության մակարդակ. 1-մեծ, 0-միջին, -1-փոքր

Հետաքրքրության մակարդակ. 1-մեծ, 0-միջին, -1-փոքր



Հաջորդ քայլը հաղորդակցության պլանի մշակումն է յուրաքանչյուր շահակիր կողմի համար:

[Հաղորդակցության պլան]

Ընդհանուր նպատակ	Հասցեագրվող հիմնախնդիրը	Լսարանը	Ուղերձը	Գործիքները	Ակնկալվող վարքագծի փոփոխությունը	Ցուցիչներ	Վկայակոչվող/ ստուգող աղբյուրներ	Կապը ընդհանուր նպատակի հետ

3. Հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշում

Հիմնախնդիրների հատկորոշումից հետո, անցկացվում է հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշման դասընթաց, որը բաղկացած է տեսական և գործնական մասերից: Առաջնահերթությունների որոշման համար կիրառվում է կշիռա-միավորային մեթոդը և ըստ հավաքած բալերի որոշվում են առաջնահերթ հիմնախնդիրները: Կտրամադրվեն նաև ձևաթերթեր մեթոդների կիրառման համար:

Որո՞նք են մեթոդի կիրառման քայլերը

- Հիմնախնդիրները հատկորոշելուց հետո փորձագետները մասնակիցների հետ քննարկում և ընտրում են, օրինակ, չորս (4) չափանիշ, որոնք պետք է կիրառվեն հատկորոշված բոլոր հիմնախնդիրների համար:
- Յուրաքանչյուր մասնակից ինքնուրույն 4-ից ընտրում է 3 չափանիշ, այնուհետև գրատախտակին կամ ֆլիպչարթի վրա հրապարակայնորեն «քվեարկում» դրանց օգտին:
- Ըստ հավաքված ձայների՝ որոշում է յուրաքանչյուր չափանիշի կշիռը:
- Յուրաքանչյուր չափանիշ կունենա նաև միավորներ (ավելի ցածր և բարձր, օրինակ, 1-4):
- Օգտագործելով այս չափանիշները՝ իրենց համապատասխան կշիռներով և միավորներով, յուրաքանչյուր մասնակից ինքնուրույն է գնահատում բոլոր հիմնախնդիրները:
- Վերջում հաշվարկվում է յուրաքանչյուր հիմնախնդիր միջին բալը՝ հիմնվելով մասնակիցների գնահատումների վրա:

Ուսումնական նյութերն ու ձևաթերթերն առկա են այստեղ.

- Կշիռա-միավորային մեթոդի նկարագրություն և կիրառման օրինակներ
- Առաջնահերթությունների որոշման աղյուսակների օրինակ 1 և օրինակ 2

Տնային աշխատանք. Սա գործնական վարժություն է, որը կհաջորդի տեսական մասին՝ տնային աշխատանքի ձևով, երբ մի քանի օրվա ընթացքում մասնակիցները կընտրեն իրենց կողմից հատկորոշած խնդիրները կշիռա-միավորային մեթոդի միջոցով կդասակարգեն ըստ առաջնահերթությունների՝ հաշվարկելով բալեր յուրաքանչյուր խնդրի համար և արդյունքները կներկայացնեն հաջորդ աշխատաժողովին: